Սարիֆելլէ լեռներից։ Մելօ վտակը ունի բազմաթիւ առուներ եւ առուակներ աջից ու ձախից, որոնք ոռոգում են Շաշէ-Գորա, Լաշէ-Գորա, Շակշիար, Շաշն-Գորա, Ջատադուրեվ, Գունուսէր, Սասօէխու, Խինզար, Մելեֆեանջուր եւ թափուում է Որջոխի մօտ ձորոխը։ Այստեղ են կապանները, Ցումատկա, Ջաղրական, Խասքին գեղերը։

Այս ձորը միշտ համարուել է Լիվանայի ամենավտանգաւոր վայրը, ուր մարդ սպանում են գոնէ մի զոյգ տրեխ ոտքերից հանելու եւ օգտուելու համար։ Միանգամայն ամենաբարեբեր ձորն է, ուր աճում է նուռը, թուզը, մանաւանդ ձիթենին։։ Այս ձորի ամէն մի անկիւնը անառիկ, անմատչելի է եւ այստեղ են մեր պատմական Որջնհաղ եւ Երախանի (Էրիխանա) գեղ-բերդերը, ուր պարբերաբար ապաստանում էին բռնաւորներից փախստականները։

Ո՛չ Պալխարի, ո՛չ էլ Փեսունջուրի ու Մելոյի շրջանում հայի գիւղ կայ. 1578ին ի սպառ կոտորուած են Հայերը, որոնք այս ձորն ապաստանելով՝ միշտ հալածել տանջել էին օսմանեան կառավարիչ փաշաներին եւ միւթի-զաղիներին։ Սակայն աւերակ բերդերի, ամրոցների եւ ագարակների շուրջը աւերակ տաճարները բազմաթիւ են։ Այս գաւառներին Պալխար-Խամխալ միացած Համշէնի եւ Սեւ ծովի ափերի՝ Արխաւէ, Վիցէ, Արտաշէն նաւահանգիստների եւ ձորի